ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

# Ծ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԵՎ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ

ՔԱՋԱՐԱՆ - 2015

# ՔԱՋԱՐԱՆԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի առաջնայնությունները սահմանել ենք.

*ղեկավարվելով* «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ՝ «Համայնքի ղեկավարի գործունեությունը բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում» հոդվածով և «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով :

*առաջնորդվելով* Քաջարան քաղաքի կապիտալ զարգացման 2013-2016 թթ ծրագրի դրույթներով,

*համոզված լինելով,* որ համայնքի կայուն զարգացումը էապես կախված է էկոլոգիական խնդիրների լուծումից,

*գիտակցելով* էկոլոգիական կրթության և տեղեկատվության կարևորությունը էկոլոգիական մտածողության ձևավորման և համայնքի առջև ծառացած խնդիրների լուծմանը հասարակության ակտիվ մասնակցությունը ապահովելու գործում,

*մտահոգ լինելով* քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությամբ,

*կարևորելով* բնապահպանական ծրագրերի շարունակականությունը, ամբողջականությունն ու փոխկապակցվածությունը :

## ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք,
2. ՀՀ Կառավարության «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առաջարկվող բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնահերթությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները ՀՀ Բնապահպանության նախարարության ու ՀՀ Առողջապահության նախարարության հետ համաձայնեցնելու կարգը հաստատելու մասին» 29.09.2002թ թիվ 1544-Ն որոշում,
3. Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ № 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին ՀՀ ԱՆ 04.03.2008թ. № 03-Ն հրաման,
4. ՀՀ Կառավարության «Բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը հաստատելու մասին» 27.02.2014թ. թիվ 197-Ն որոշում,
5. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք,
6. Քաջարան քաղաքի կապիտալ զարգացման 2013-2016 թթ ծրագիր:

# ԾՐԱԳՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի ռազմավարական նպատակը բնական էկոհամակարգերի պահպանությունը, բարելավումը և բնակչության էկոլոգիական անվտանգության ապահովումն է:

# ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## Նպատակ 1. Մթնոլորտային օդի բարելավում

### Խնդիր 1 Քաղաքի տարածքի փոշու ծանրաբեռնվածության նվազեցում

Մթնոլորտային օդի աղտոտվածությունը բերում է շրջակա միջավայրի մյուս բաղադրիչների աղտոտման, իսկ աղտոտվածության բացասական ազդեցության հիմնական թիրախը,վերջին հաշվով, քաղաքի բնակչությունն է: Այս առումով մթնոլորտային օդի մաքրության պահպանությունը առանձնակի կարևորություն է ստանում:

Համայնքի մթնոլորտային օդը հիմնականում աղտոտվում է փոշով: Մթնոլորտային օդը փոշով աղտոտող հիմնական օբյեկտները ԶՊՄԿ արտադրամասերն են՝ բաց հանք, հանքաքարի ջարդման և տեղափոխման, խտանյութի չորացման արտադրամասեր, դատարկ ապարների թափուկավայրեր և այլն: Փոշու առաջացման աղբյուր են հանդիսանում նաև շինարարական (առավելապես արդյունաբերական) աշխատանքներն ու Երևան-Մեղրի միջպետական մայրուղին, որը քաղաքի տարածքով է անցնում:

Փոշու ծանրաբեռնվածությունը քաղաքի վրա մեծանում է նաև ԶՊՄԿ արտադրական հզորությունների պարբերական ընդլայնման, քաղաքի կառուցապատված հատվածի և ԶՊՄԿ արտադրամասերի միջև սանիտարական գոտու բացակայության, քաղաքին բաց հանքի աշխատանքային ճակատների մոտիկության պատճառներով: 2006-2007թթ. քաղաքապետարանի կողմից պատվիրված հետազոտություններով ամռան ամիսներին փոշու ծանրաբեռնվածությունը 1կմ$^2$ – ու վրա օրական 1-1,2 տ է գնահատվել: 2007թ. հետո հանքաքարի մշակման ծավալներն ավելացել են մոտ 2 անգամ: Փուշու ծանրաբեռնվածության անընդհատ աճը տեսանելի անգամ անզեն աչքով:

Փոշին նաև քաղաքում լայնորեն տարածված շնչառական ուղիների և ալերգիկ հիվանդությունների հիմնական պատճառներից մեկն է:

Փոշու դեմ պայքարը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ փոշին ծանր մետաղների տարրեր է պարունակում. առկա են նաև վտանգավորության 1-ին և 2-րդ դասի տարրեր:

**Գործողություն 1.** Քաղաքի ճանապարհների, փողոցների, հրապարակների և բակերի մաքրում փուշուց, ավազից, խճից, հողային զանգվածներից և այլ կուտակված ավելվածքներից:

**- Վակուումային ավլող-մաքրող «փոշեկուլ» մեքենայի ձեռք բերում**

*Հիմնավորում*

*Քաղաքում փոշեճնշման աշխատանքներ կատարելու համար քաղաքապետարանը «Շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանության» ծրագրի շրջանակներում 2008թ. ձեռք է բերել ջրցան մեքենա: Մեքենայի շահագործումը զգալիորեն բարձրացրել է փոշու դեմ պայքարի արդյունավետությունը, բայց առկա խնդրին չի կարող վերջնական լուծում տալ: Մթնոլորտային օդի փոշով երկրորդային աղտոտումը էապես նվա-*

*զեցնելու կամ չեզոքացնելու համար արդիական վակուումային «փոշեկուլ» մեքենայի առկայությունը խիստ անհրաժեշտ է. քաղաքների օդի մաքրության համար պայքարի նորարարական մեթոդներից մեկը համարվում է սանիտարական մաքրումը «վակուումային» մաքրող (փոշեկուլ) մեքենաներով իրականացումը:*

*Արդյունք*

*Սանիտարական մաքրման աշխատանքների մեքենայացումը կնպաստի այդ աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, էապես կբարելավվեն քաղաքի սանիտարա-հիգիենիկ պայմանները: Մեքենան հնարավորություն կտա հավաքել և անվտանգ վայր տեղափոխել նաև աշնանը քաղաքի տարածքում թափված տերևները, որոնք մեծամասամբ հավաքվում և այրվում են, մթնոլորտային օդի աղտման նոր աղբյուր հանդիսանալով:*

Համապատասխանությունը Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին՝ ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին.

Հանապատասխանում է Օրենքի 3-րդ հոդվածի ա) կետի *«շրջակա միջավայրի տեղական և տարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքարը, որը ներառում է մթնոլորտային օդի մաքրության պահպանության, ջրային ռեսուրսների (մակերևութային և ստորերկրյա) պահպանության, աղմուկի և վիբրացիայի դեմ պայքարի և ճառագայթահարման դեմ պաշտպանության հետ կապված աշխատանքները և գործողությունները (...)»* պարբերությանը:

## Նպատակ 2. Բնապահպանական մշակույթի ձևավորում

### Խնդիր 1. Էկոլոգիական կրթության զարգացում և տեղեկատվություն

Համայնքում էկոլոգիական կրթության զարգացումը քաղաքապետարանի կողմից իրականացվող էկոլոգիական քաղաքականության հիմնական բաղադրիչն է:

«Քաջարանի բնության և բնակչության առողջության պահպանություն» ծրագրի շրջանակներում էկոլոգիական գիտելիքների տարածման և էկոկրթության զարգացման նպատակներով համայնքի հանրակրթական դպրոցների ուսումնական պլաններում ընդգրկվել է «Քաջարան. բնությունը և էկոլոգիան» դպրոցական առարկան (8-9 դասարանների համար): Կազմվել է համապատասխան դասագիրք, մեթոդական ուղեցույց ուսուցիչների համար և ուսումնական դիտակտիկ նյութեր:Առարկայի դասավանդումը, հետագայում նաև այլ դասարանների ընդգրկմամբ, բարձր մակարդակով կազմակերպելու, դասընթացն ավելի գործնական, հաճելի ու գրավիչ դարձնելու համար Ծրագրի շրջանակներում դպրոցներում մասնագիտացված էկոլոգիական դասարան-լաբորատորիաներ են ստեղծվել, հագեցվել համապատասխան ուսումնական նյութերով ու սարքավորումներով: Դասարան-լաբորատորիաների ուսումնական արդիական տեխնիկական միջոցներով հագեցված լինելը համակողմանի ու արդյունավետ է դարձնում աշակերտների էկոլոգիական կրթության ու դաստիարակության կազմակերպումը:

Շրջակա միջավայրի պահպանության հետ կապված խնդիրների լուծումը հնարավոր է միայն իրազեկված և էկոլոգիական առնվազն նվազագույն գիտելիքներին տիրապետող հասարակության միջոցով:Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը իրենց հաստատուն և անփոխարինելի տեղն ունեն էկոլոգիական կուլտուրայի ձևավորման,առողջ ապրելակերպի և էկոլոգիական անվտանգության ապահովման գործում:

**Գործողություն 1. Քաջարանի դպրոցներում քաղաքապետարանի կողմից ստեղծված էկոլոգիայի լաբորատորիաների գործունեության ապահովում**

*- լաբորատոր նյութերի, պարագաների համալրում,*
*- ուսումնական դիտակտիկ նյութերի ձեռք բերում,*
*-դաշտային բանակումների և բնապահպանական ճամբարների կազմակերպում:*

**Գործողություն 2. Տեղեկատվական նյութերի հրատարակում**

***Հիմնավորում.*** «Քաջարան.բնությունը և էկոլոգիան» ուսումնական առարկայի դասավանդման ու դպրոցների էկոլոգիայի լաբորատորիաների ընթացիկ գործունեության ապահովումն իրականացնում է քաղաքապետարանը: Այս բնագավառում քաղաքապետարանի հանձն առած գործունեությունը լիովին համապատասխանում է «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին», «Կրթության մասին», «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքների, ՄԱԿ-ի «ԵՏՀ Կրթություն հանուն կայուն զարգացման» ռազմավարության սկզբունքներին ու դրույթներին:

***Արդյունք.*** Կապահովվի Ծրագրի շարունակականությունն ու անընդհատությունը:

Համապատասխանությունը «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին.

Հանապատասխանում է Օրենքի 3-րդ հոդվածի ա) կետի ***« շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ տեղեկատվության տարածման կամ իրազեկման, էկոլոգիական կրթության գծով աշխատանքները և գործողությունները, բնապահպանությանը վերաբերող վերապատրաստման դասընթացների կազմակերպումը և ինստիտուցիոնալ ամրապնդումը»*** և Օրենքի 3-րդ հոդվածի ա) կետի ***«համայնքահեն բնապահպանական հասարակական կազմակերպություններին սույն կետում նշված միջոցառումների կատարման համար աջակցության ցուցաբերումը»*** պարբերություններին:

## Նպատակ 3. Թափոնների կառավարման բարելավում

**Խնդիր 1. Բժշկական թափոնների վնասազերծում**

Բժշկական թափոնների խնդիրը հրատապ է ամբողջ աշխարհում: Հրատապությունը կայանում է ինչպես բժշկական թափոնների մեջ վտանգավոր թափոնների ծավալի մեծությունը, այնպես էլ բժշկական թափոնների քանակի ու տեսակային կազմի անընդհատ ավելացումը:

Բժշկական թափոնները վտանգ են ներկայացնում ոչ միայն հիվանդների կամ առողջապահական հաստատությունների աշխատակիցների, այլև շրջակա միջավայրի համար: Նույնիսկ բժշկական թափոնների թաղումը կամ այրումը չի կարող չեզոքացնել շրջակա միջավայրի վրա այդ թափոնների ունեցած բացասական ազդեցությունը:

Խնդրի լուծման միակ արդյունավետ տարբերակը հանդիսանում է բժշկական թափոնների վնասազերծումը ժամանակակից տեխնոլոգիաների և հատուկ սարքավորումների միջոցով, որոնք առավելագույն վարակազերծում են ապահովում և վերացնում կրկնակի օգտագործման հնարավորությունը: Այս սարքերի գործածությունը թույլ է տալիս բժշկական թափոնները դարձնել անվտանգ կենցաղային աղբ, որը հնարավոր է տեղադրել համայնքային աղբավայրերում:

**Գործողություն 1. Քաջարանի բժշկական կենտրոնի բժշկական վտանգավոր թափոնների վնասազերծում**

- **Քաջարանի բժշկական կենտրոնի համար բժշկական թափոններ վնասազերծող սարքավորման ձեռք բերում**

**Հիմնավորում**

2013թ. վերանորոգվել է Քաջարանի պոլիկլինիկայի մասնաշենքը, որտեղ կենտրոնացվել են հիվանդանոցային և պոլիկլինիկական ծառայությունները: Ծառայությունների կենտրոնացումը բացառում է քաղաքում ձևավորվող բժշկական թափոնների տեղափոխում կատարելու անհրաժեշտությունը, ինչը թափոնների վնասազերծումը ավելի կազմակերպված և արդյունավետ իրականացնելու հավելյալ հնարավորություն է ընձեռում:

Բժշկական կենտրոնի շենքը գտնվում է քաղաքի բնակելի խիտ կառուցապատված հատվածում, ինչն ավելի հրատապ է դարձնում կենտրոնի բժշկական թափոնների վնասազերծումը՝ բնակչության առողջության անվտանգությունն ապահովելու նկատառումներով:

Բժշկական կենտրոնի քաղաքի կետրոնում գտնվելու հանգամանքը և տարածքի փոքրությունը հնարավորություն չի տալիս թափոնների ժամանակավոր վնասազերծման համար թաղման հոր կառուցելու:

*Հ.գ. 2015թ. Քաջարանի բժշկական կենտրոնում բուժվող բազմաթիվ հիվանդներ վարակվել են հեպատիտով:*

***Վտանգավոր թափոնների վերամշակումը, վնասազերծումը, պահպանումը, փոխադրումը և տեղադրումը «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն լիցենզավորման ենթակա գործունեություն է: Հետևաբար բժշկական թափոնների վնասազերծումը Քաջարանի բժշկական կենտրոնի կողմից կիրականացվի միայն համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:***

**Արդյունք.** Արդիական մեթոդներով կլուծվի Քաջարանի բժշկական կենտրոնում գոյացող վտանգավոր թափոնների վնասազերծման խնդիրը: Կնվազի ներհիվանդանոցային վարակների առաջացման հնարավորությունը՝ ապահովելով աշխատողների և հիվանդների անվտանգությունը, բարձրացնելով բուժհաստատության աշխատանքի որակը: Կբացառվի վտանգավոր թափոնների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և բնակիչների առողջության վրա::

Համապատասխանությունը «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին.

Համապատասխանում է Օրենքի 3-րդ հոդվածի բ) կետի *«- առողջապահության բնագավառում լիազորված պետական մարմնի հետ համաձայնեցված այլ համապատասխան միջոցառումներ»* պարբերությանը:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Ծրագրի իրականացումը թույլ կտա ապահովել իրականացված բնապահպանական ծրագրերի անընդհատությունը և շարունակականությունը, կբարձրացնի էկոլոգիական կրթության զարգացման համար ներդրված միջոցների արդյունավետությունը և կբարելավի քաղաքի էկոլոգիական պայմանները: Ծրագիրը կնպաստի նաև համայնքային և պետության կողմից տրամադրվող միջոցների, ՀՀ –ում գրանցված միջազգային, հումանիտար, ոչ կառավարական և այլ կազմակերպությունների հնարավորությունների առավել նպատակային և արդյունավետ օգտագործմանը՝ քաղաքի առջև ծառացած էկոլոգիական խնդիրների լուծման նպատակով:

Համայնքի ղեկավար՝ Վ.Գևորգյան

Համաձայնեցված է

ՀՀ Առողջապահության նախարար
Ա. Մուրադյան

„27" հոկտեմբեր 2015թ.

Հավելված

<< Քաջարանի բնության և բնակչության
առողջության պահպանման>> 2016թ. ծրագրի

Քաջարան քղաքի 2016թ. բնապահպանական և առողջապահական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները

**Համաձայնեցված է**

ՀՀ բնապահպանության նախարար

_____ Ա. Գրիգորյան

«28» հուլիսի 2015թ.

**Հավելված**

Քաջարան համայնքի 2016թ.
բնապահպանական ծրագրի

# Քաջարան համայնքի 2016 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները

# ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատում եմ

Քաջարան քաղաքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2016 թվականի ծրագրի

Քաղաքապետ Վ.Գևորգյան

*ածողական, հազար դրամ*

| | Ծրագրի ոլորտը և միջոցառումների անվանումները | Միջոցառումների հիմնական ցուցանիշներ | | | | | Ֆինանսավորման ծավալները | | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Կատարման ժամկետ | Չափի միավոր | Միավորի արժեքը | Քանակ | Ընդհանուր գումար | Վեց ամիս | Ինը ամիս | Տարի | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ | | | | | | 13250,0 | 4800,0 | 12350,0 | 13250,0 | |
| 1 | Քաղաքի տարածքի փոշու ծանրաբեռնվածության նվազեցում | | | | | | | | | 2007թ. իրականացված հետազոտություններով ամռան ամիսներին փոշու ծանրաբեռնվածությունը 1կմ² – ու վրա օրական 1-1,2 տ է գնահատվել: 2007թ. հետո ԶՊՄԿ արտադրական ծավալները ավելացել են մոտ 2 անգամ: Փոշին ծանր մետաղների տարրեր է պարունակում. առկա են նաև վտանգավորության 1-ին և 2-րդ դասի տարրեր: Քաղաքների օդի մաքրության համար պայքարի նորարարական մեթոդներից մեկը համարվում է քաղաքի սանիտարական մաքրումը «վակուումային» մաքրող (փոշեկուլ) մեքենաներով իրականացումը: Սանիտարական մաքրման աշխատանքների մեքենայացումը կնպաստի այդ աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, էապես կբարելավվեն քաղաքի սանիտարա-հիգիենիկ պայմանները: Մեքենան հնարավորություն կտա հավաքել և անվտանգ վայր տեղափոխել նաև աշնանը քաղաքի տարածքում թափված տերևները, որոնք մեծամասամբ հավաքվում և այրվում են, մթնոլորտային օդի աղտման նոր աղբյուր հանդիսանալով: |
| 1.1 | Վակուումային ավլող-մաքրող «փոշեկուլ» ավտոմեքենայի ձեռք բերում | 2-րդ եռ. | հատ | 11000,0 | 1 | 11000,0 | 4000,0 | 11000,0 | 11000,0 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | Էկոլոգիական կրթության զարգացում և տեղեկատվություն | | | | | 2250,0 | 800,0 | 1350,0 | 2250,0 | «Քաջարան.բնությունը և էկոլոգիան» ուսումնական առարկայի դասավանդման ու դպրոցների էկոլոգիայի լաբորատորիաների ընթացիկ գործունեության ապահովումը իրականացնում է քաղաքապետարանը: Այս բնագավառում քաղաքապետարանի հանձն առած գործունեությունը լիովին համապատասխանում է «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին»,«Կրթության մասին», «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքների, ՄԱԿ-ի «ԵՏՀ Կրթություն հանուն կայուն զարգացման» ռազմավարության սկզբունքներին ու դրույթներին: |
| 2.1 | Քաղաքի դպրոցների էկոլոգիայի լաբորատորիաների գործունեության ապահովում | 1-4 եռ. | լաբորատորիա | 500,0 | 2 | 1000,0 | 500,0 | 750,0 | 1000,0 | |
| *2.1.1* | *Թեստային անալիզների համար քիմիական նյութերի ձեռք բերում* | *2 -3 եռ.* | *լրակազմ* | *100,0* | *2* | *200,0* | *100,0* | *200,0* | *200,0* | |
| *2.1.2* | *<<Քաջարան. բնությունը և էկոլոգիան>> ուսումնական առարկայի համար թեմատիկ, կիսամյակային գրավորների և աշխատանքային տետրերի տպագրում* | *2-րդ եռ.* | *հատ* | *1,5* | *100* | *150,0* | *150,0* | *150,0* | *150,0* | |
| *2.1.3* | *Շարժական ինտերնետ կապի ծառայության ձեռք բերում* | *1-4 եռ.* | *2 մոդեմ* | *70,0* | *2* | *140,0* | *70,0* | *105,0* | *140,0* | |
| *2.1.4* | *Լաբորատորիայի համակարգչային և էլեկտրոնային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռք բերում* | *1-4 եռ.* | *պլանային սպասարկում* | *15,0* | *4* | *60,0* | *30,0* | *45,0* | *60,0* | |
| | *Սարքավորումների համար լրակազմի ձեռք բերում(քարթրիջների լիցքավորում, էլեկտրական մարտկոցների, մեկանգամյա օգտագործման ինդիկատորների, ձեռք բերում)* | *1-4 եռ* | *լաբորատորիա* | *60,0* | *2* | *120,0* | *60,0* | *90,0* | *120,0* | |
| | *Արշավների, էքսկուրսիաների և դաշտային աշխատանքների կազմակերպում դպրոցների էկոլոգիայի խմբակների մասնակիցների համար* | *2-3 եռ.* | *աշակերտ* | *1,1* | *30,0* | *330,0* | *90,0* | *160,0* | *330,0* | |
| 2.2 | Ուսումնական նյութերի և սարքավորումների ձեռք բերում | 3 եռ | լաբորատորիա | 425,0 | 2 | 950,0 | 300,0 | 600,0 | 950,0 | |
| *2.2.1* | *Եղանակի դիտարկման դպրոցական սարքավորումների հավաքածուի ձեռք բերում* | *3-րդ եռ.* | *հավաքածո* | *425,0* | *2* | *425,0* | *300,0* | *600,0* | *950,0* | |
| 2.3 | Տեղեկատվական և ճանաչողական նյութերի հրատարակում | 3-4 եռ. | անուն* օրինակ | 100,0 | 3 | 300,0 | ---- | ---- | 300,0 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *2.3.1* | *Քաջարանի շրջակայքում հանդիպող ՀՀ Բույսերի Կարմիր գրքում գրանցված բույսերի դաշտային ուղեցույց* | *3-4 եռ.* | *օրինակ* | *2,0* | *50* | *100,0* | --- | --- | *100,0* | |
| *2.3.2* | *Քաջարանի շրջակայքում հանդիպող ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների դաշտային ուղեցույց* | *3-4 եռ.* | *օրինակ* | *2,0* | *50* | *100,0* | --- | --- | *100,0* | |
| | *Քաջարանի շրջակայքում հանդիպող ուտելու վայրի խոտաբույսերի դաշտային ուղեցույց* | *3-4 եռ.* | *օրինակ* | *2,0* | *50* | *100,0* | --- | --- | *100,0* | |
| ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ | | | | | | 3250,0 | --- | 3250,0 | 3250,0 | |
| 3 | Բժշկական թափոնների վնասազերծում | | | | | 3250,0 | --- | 3250,0 | 3250,0 | Բժշկական կենտրոնի շենքը գտնվում է քաղաքի բնակելի խիտ կառուցապատված հատվածում, ինչն ավելի հրատապ է դարձնում կենտրոնի բժշկական թափոնների վնասազերծումը՝ բնակչության առողջության անվտանգությունը ապահովելու նկատառումներով:<br>Արդիական մեթոդներով կլուծվի Քաջարանի բժշկական կենտրոնում գոյացող վտանգավոր թափոնների վնասազերծման խնդիրը: Կնվազի ներհիվանդանոցային վարակների առաջացման հնարավորությունը՝ ապահովելով աշխատողների և հիվանդների անվտանգությունը, բարձրացնելով բուժհաստատության աշխատանքի որակը: Կբացառվի վտանգավոր թափոնների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և բնակիչների առողջության վրա:: |
| 3.1 | Բժշկական թափոնների վնասազերծման սարքի ձեռք բերում Քաջարանի բժշկական կենտրոնի համար<br>*Սարքի տեսակի և ներկայացվող տեխնիկական պահանջների մասին բացատրագիրը կցվում է Հավելվածին* | 3-րդ եռ. | հատ | 3250,0 | 1 | 3250,0 | --- | 3250,0 | 3250,0 | **<u>Բժշկական թափոնների վնասազերծման գործունեությունը Քաջարանի բժշկական կենտրոնի կողմից կիրականացվի միայն համապատասխան լիցենզիայի առկայության պայմաններում:</u>** |
| ԸՆԴԱՄԵՆԸ<br>այդ թվում | | | | | | 16500,0 | 4800,0 | 15600,0 | 16500,0 | |
| ***կապիտալ ծախսեր*** | | | | | | 14250,0 | 4000,0 | 14250,0 | 14250,0 | |
| ***վարչական ծախսեր*** | | | | | | 2250,0 | 800,0 | 1350,0 | 2250,0 | |

Հաստատվել է
առողջապահության նախարարի
Ս. Սողոմոնյանի հրամանով
«12» 08 2016թ.

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՆՔԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ

2016թ. հունվարի 1-ից մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում

Երևան, 2016թ. հունիսի 27

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, հետագայում «Նախարարություն» անվանված, որի անունից գործում է նախարարի 2015թ. հունիսի 27-ի թիվ 21-Ն հրամանով հաստատված կանոնադրության հիման վրա գործող նախարարությունը, մի կողմից և

Հայաստանի Հանրապետության Սոցիալական ապահովագրության հիմնադրամը, հետագայում «Հիմնադրամ» անվանված, որի անունից գործում է հիմնադրամի տնօրենի 2016թ. հունվարի 18-ի թիվ 1 հրամանի հիման վրա գործող հիմնադրամի տնօրենը մյուս կողմից

հանդես գալով առանձին-առանձին «Կողմեր», ինչպես նաև Կողմերի հանրագրավոր անվանմամբ «Կողմերը», հետևյալի մասին կնքեցին սույն պայմանագիրը՝

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Համայնքի ղեկավար _____ Վ.Գևորգյան

# ՀԱՎԵԼՎԱԾ

**Քաջարան քաղաքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2016 թվականի ծրագրի՝ Քաջարանի քաղաքային համայնքի ավագանու 18 հուլիսի 2016թ. թիվ 21-Ա որոշմամբ հաստատված փոփոխություններով**

| | Ծրագրի ոլորտը և միջոցառումների անվանումները | Միջոցառումների հիմնական ցուցանիշներ | | | | | Ֆինանսավորման ծախսերը | | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Կատարման ժամկետ | Չափի միավոր | Միավորի արժեքը | Քանակ | Ընդհանուր գումար | Վեց ամիս | Ինը ամիս | Տարի | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ | | | | | | 15950,0 | 1500,0 | 8200,0 | 15950,0 | |
| 1 | Քաղաքի տարածքի փոշու ծանրաբեռնվածության նվազեցում | | | | | 13000,0 | 1000,0 | 6500,0 | 13000,0 | 2007թ. իրականացված հետազոտություններով ամռան ամիսներին փոշու ծանրաբեռնվածությունը 1կմ² – ու վրա օրական 1-1,2 տ է գնահատվել: 2007թ. հետո ՀՊՄԿ արտադրական ծավալները ավելացել են մոտ 2 անգամ: Փոշին ծանր մետաղների տարրեր է պարունակում. առկա են նաև վտանգավորության 1-ին և 2-րդ դասի տարրեր: Քաղաքների օդի մաքրության համար պայքարի նորարարական մեթոդներից մեկը համարվում է քաղաքի սանիտարական մաքրումը «վակուումային» մաքրող (փոշեկուլ) մեքենաներով իրականացումը: Սանիտարական մաքրման աշխատանքների մեքենայացումը կնպաստի այդ աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, էապես կբարելավվեն քաղաքի սանիտարա-հիգիենիկ պայմանները: Մեքենան հնարավորություն կտա հավաքել և անվտանգ վայր տեղափոխել նաև աշնանը քաղաքի տարածքում թափված տերևները, որոնք մեծամասամբ հավաքվում և այրվում են, մթնոլորտային օդի աղտման նոր աղբյուր հանդիսանալով: |
| *1.1* | *Վակուումային ավլող-մաքրող «փոշեկուլ» ավտոմեքենայի ձեռք բերում* | *2-րդ եռ.* | *հատ* | *13000,0* | *1* | *13000,0* | *1000,0* | *6500,0* | *13000,0* | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | Մակերևութային ջրերի աղտոտման սահմանափակում | | | | | 490,0 | --- | 490,0 | 490,0 | Տեխնիկական բնութագիրը կցվում է |
| *2.1* | *Կեղտաջրի սուզապոմպի ձեռք բերում* | *3 եռ.* | *հատ* | *490,0* | *1* | *490,0* | *---* | *490,0* | *490,0* | |
| 3 | Քաղաքային լուսավորության համակարգի էներգաարդյունա-վետ արդիականացում | | | | | 210,0 | --- | 210,0 | 210,0 | Ծախսը սահմանված է «ՀՀ պետական կա-բիքների համար շին. նյութերի, կոնտրուկցիաների, պատրաստվածքների կողմնորոշիչ գների ինֆոր-մացիոն տեղեկագրի» առաջարկած գներով |
| *3.1* | *Փողոցային լուսավորության համար սյուների ձեռք բերում* | *3 եռ.* | *հատ* | *35,0* | *6* | *210,0* | *---* | *210,0* | *210,0* | *Տեխնիկական բնութագիրը կցվում է* |
| 4 | Էկոլոգիական կրթության զարգացում և տեղեկատվություն | | | | | 2250,0 | 500,0 | 1000,0 | 2250,0 | «Քաջարան.բնությունը և էկոլոգիան» ուսում-նական առարկայի դասավանդման ու դպրոցների էկոլոգիայի լաբորատորիաների ընթացիկ գործու-նեության ապահովումը իրականացնում է քաղա-քապետարանը: Այս բնագավառում քաղաքապե-տարանի հանձն առած գործունեությունը լիովին համապատասխանում է «Ազգաբնակչության էկո-լոգիական կրթության և դաստիարակության մա-սին»,«Կրթության մասին», «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք-ների, ՄԱԿ-ի «ԵՏՀ Կրթություն հանուն կայուն զարգացման» ռազմավարության սկզբունքներին ու դրույթներին: |
| *4.1* | *Քաղաքի դպրոցների էկոլոգիայի լաբորատորիաների գործունեության ապահովում* | *1-4 եռ.* | *լաբորա տորիա* | *500,0* | *2* | *1000,0* | *400,0* | *500,0* | *1000,0* | |
| *4.2* | *Ուսումնական նյութերի և սարքավորումների ձեռք բերում* | *3 եռ* | *լաբորա տորիա* | *225,0* | *2* | *450,0* | *----* | *---* | *450,0* | |
| *4.3* | *Տեղեկատվական և ճանաչողական նյութերի հրատարակում* | *3-4 եռ.* | *անուն* օրինակ* | *100,0* | *3* | *300,0* + | *----* | *----* | *300,0* | |
| *4.4* | *«Քաջարան քաղաքում պլաստիկ թափոնների հավաքման համար աղբամանների տեղադրում և հանրային իրազեկման հզորացում» ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումներ* | *2-3 եռ* | | | | *500,0* -90.000 | *100,0* | *500,0* | *500,0* | ԱՄՆ ՄԶԳ «Գործընկերություն հանուն գյու-ղական համայնքների բարգավաճման» ծրագրի հետ համագործակցությամբ իրականացվող միջո-ցառումներն իրենց մեջ ներառում են՝ տեղեկա-տվական թերթիկների տպագրություն, սեմինարի կազմակերպում, աղբամանների տեղադրում: |
| ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ | | | | | | 550,0 | --- | 550,0 | 550,0 | |
| 5 | Աջակցություն Քաջարանի բժշկական կենտրոնին | | | | | 550,0 | --- | 550,0 | 550,0 | Գնանշման համար հիմք են հանդիսացել բժշ-կական գույքի և սարքավորումների ներմուծմամբ և վաճառքով զբաղվող կազմակերպությունների ա-ռաջարկած գնացուցակները http://unimed.am/, http://medtechnicaplus.am/ Տեխնիկական բնութագիրը կցվում է |
| *5.1* | *Բժշկական գործիքների և սարքերի ձեռք բերում* | *3-րդ եռ.* | *հատ* | *3250,0* | *1* | *550,0* | *---* | *550,0* | *550,0* | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | 16500,0 | 1500,0 | 8750,0 | 16500,0 | |
| *կապիտալ ծախսեր* | | | | | | 14250,0 | 1000,0 | 7750,0 | 14250,0 | |
| *վարչական ծախսեր* | | | | | | 2250,0 | 500,0 | 1000,0 | 2250,0 | |

**Հաստատվում է**

ՀՀ բնապահպանության նախարար

Ս. Փոխարյան

«16» մայիս 2016թ.

**Փոխհատուցում N 1**

բաշխման հանձնման ծրագրի համար

բաշխման հանձնման ծրագրի 2016թ.

# Համաձայնագիր

## բաշխման հանձնման ենթակա անտառային հողամասերի հիմնական բնութագրերի և դրանց ֆիզիկական կամ իրավական անձանց հասցեների 2016 թվականի բյուջեի եկամուտների մասին